

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Սեպտեմբերի 25-ին, կիրակի.—Տօն է Վարագայ սրբոյ Խաչին:

Այսօր, վաղ առավոտից, Մայր տաճարը լեփ-լեցուն էր հյուրերի և ուխտավորների բազմությամբ, որոնք եկել էին ներկա լինելու ս. պատարագի սրբազան արարողությանը և միաժամանակ շնորհավորելու և իրենց հարգանքի ու սիրո տուրքը մատուցելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ ծննդյան 80-ամյակի կապակցությամբ:

Ս. պատարագն սկսվեց ժամը 10.30-ին: Պատարագիչն էր Փարիզի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Գյուտ եպս. Նագգաշյանը: Ս. պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետի ծննդյան 80-րդ տարեդարձի առթիվ շնորհավորելու եկած Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մինսկի ու Բելոռուսիայի միտրոպոլիտ Ֆիլարետը, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ներկայացուցիչներ, Հայ Եկեղեցու ներքին և արտասահմանյան թեմերի արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ, բազմաթիվ հոգևոր հայրեր, գիտության ու մշակույթի գործիչներ և պաշտոնական այլ անձինք:

Ս. պատարագին ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պրն. Ս. Վարդանյանը, տեղակալներ պրն. պրն. Լ. Սուջյանը և Ռ. Զարգարյանը:

«Հայր մեր»-ից առաջ Հայոց Հայրապետը արտասանեց հետևյալ ոգեշունչ քարոզը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԻՐ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ՔԱՐՈԶ ԽՈՍԵԼԻՍ

(25 սեպտեմբերի 1988 թ.)

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(25 սեպտեմբեր 1988 թ.)

«Յաւնում Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

Ուղիղ քառասունհինգ տարիներ առաջ, 1943 թ. նոյեմբերի 28-ին, Բուխարեստի հայոց եկեղեցու կամարների ներքո, խուռներամ ժողովրդի ներկայությամբ, սի երիտասարդ վարդապետ իր անդրանիկ պատարագն էր մատուցում և իր առաջին աղոթքը առաքում առ Աստված: Այդ վարդապետը այսօրվա Ամենայն Հայոց կաթողիկոսն է, որ իր հոգևոր ծառայության ուխտն էր կատարում:

1943 թ. աշխարհակործան պատերազմի օրեր էին, և հատկապես մեր հայրենի ժողովուրդը մահացու վտանգի ներքև էր գտնվում: Այդ օրը ես աղոթեցի մեր Եկեղեցու և ժողովրդի անվտանգության ու փրկության համար: Ես աղոթեցի աշխարհի խաղաղության համար:

Ես ծածուկ աղոթեցի նաև սովետական բանակների հաղթանակի համար. ասում եմ՝ ծածուկ աղոթեցի, որովհետև այդ օրերին Ռումինիան գտնվում էր հիտլերյան Գերմանիայի կրնկի տակ: Բայց, այնուամենայնիվ, իբրև հայ ժողովրդի զավակ, ես համարձակվեցի բարձրաձայն աղոթել մեր ազգի զավակների հոգիների համար, որոնք այդ օրերին հազար-հազարներով զոհվում էին, հերոսաբար պաշտպանելու համար իրենց հայրենիքը, իրենց ազատությունը, իրենց արժանապատվությունը:

Այդ օրերին աշխարհի բոլոր հայերը աղոթում էին սովետական հաղթանակի համար, մանավանդ Վոլգայի ափերին մղվող ահեղ ճակատամարտում: Մենք արտասահմանում բոլորս գիտակցում էինք, որ, եթե այդ ափերին պարտվեր սովետական բանակը, Արաքսի մյուս ափին, մինչև ատամները գերմանական զենքերով զինված թրքական բանակը, պատրաստ էր հարձակվելու Հայաստանի վրա, մեր ժողովրդի մարմնի վրայով ուղղվելու դեպի Բաքվի նավթը: Հայաստանին և հայ ժողովրդին սպառնում էր մի երկրորդ ցեղասպանություն: Փառք Տիրոջը, որ և՛ Վոլգայի ափերին, և՛ ապա հենց Բեռլինում՝ ջախջախվեցին հիտլերյան հրեշի յոթը գլուխները:

Հաղթական ժողովուրդների հետ միասին նաև մեր ազգը հասավ վերածննդի ափին, մայր հայրենիքի վերաշինության լուսաբացին, հայ ժողովրդի երազանքների իրականացման ճանապարհին:

Խորը հուզումով հիշում եմ, հայրենական հաղթանակից հետո, իմ առաջին այցը Հայաստան 1945 թ. մայիսին, արտասահմանից եկած բազմաթիվ հոգևորական և աշխարհական ներկայացուցիչների հետ: Հաղթանակի և վերածննդի ուրախությամբ համարյա բոլորս արտասվում էինք՝ մեր հայացքը ուղղած դեպի հավերժական Արարատը և դեպի Ս. Էջմիածին:

Անցան բազում տարիներ, և 1955 թ. աշնանը, իմ կամքից անկախ, իմ ուսերին դրվեց ծանր պարտականությունը՝ ծառայելու հայոց Եկեղեցուն և ժողովրդին, իբրև առաջին սպասավոր:

Ահա երեսուներեք տարիներ շարունակ Ս. Լուսավորչի գահի վրա ես իմ տկար ուժերով աշխատեցի պարտքս կատարել Աստուծո և իմ ժողովրդի հանդեպ՝ հաճախ հաղթահարելով բազում դժվարություններ, երբեմն նույ-

նիսկ տագնապալի պահեր: Իմ հոգևոր եղբայրների գործակցությամբ, հայրենի և արտասահմանի մեր հավատացյալ ժողովրդի աջակցությամբ, մեր հայրենի պետության ուշադիր վերաբերմունքի շնորհիվ, ես կարողացա կյանքի կոչել իրագործումներ՝ եկեղեցաշինության, հոգևոր զարթոնքի, հայրենիք-սփյուռք միասնության մակարդակների վրա:

Այսօր, ես 86 տարեկան եմ և շարունակում եմ ասել Աստված առաքել հույն խաղաղության աղոթքը, աղոթք համայն աշխարհի խաղաղության, ազգությունների բարեկամության և պետությունների շինարար գործակցության: Ինձ համար բացարձակ ճշմարտություն է, թե մանավանդ մեր դարաշրջանում որևէ պատերազմ, ո՛չ մի լավ բան չի խոստանա ո՛չ ոքի, ո՛չ մի պատերազմ չի լուծի ո՛չ մի հարց: Որևէ պատերազմ աղետ է և կործանում բոլորի համար հավասարապես: Խաղաղության տեսլականը այսօր կյանքի փիլիսոփայություն է: Ես աղոթում եմ բոլոր ժողովուրդների խաղաղ համագործակցության համար: Համոզված եմ, որ որևէ հարց, ինչքան էլ այն արդար լինի, չի կարող դրական լուծում ստանալ ազգամիջյան խռովությունների և թշնամանքների ճանապարհով: Վերջապես խաղաղություն՝ նաև մեր հարազատ ժողովրդին, մեր մայր հայրենիքին: Խաղաղության և եղբայրասիրության պատգամը հրամայական է մանավանդ այս վերջին ամիսներին, երբ մեր ժողովրդի զավակները տագնապալի օրեր են ապրում Ղարաբաղի մեր եղբայրների արդար սպասումների իրականացման ի խնդիր:

Այո՛, արդարացի են Ղարաբաղի հայության պահանջները: Մեր օրինությունը նրանց հետ է այժմ և միշտ: Եվ ինձ համար հույժ մխիթարական է, որ այս հարցում, տիրում է կատարյալ միասնություն հայ ժողովրդի ծոցում, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Տիրում է միասնություն՝ մեր ժողովրդի և Հայաստանի պետական իշխանության միջև:

Սիրելի ժողովուրդ հայոց, սիրելի երևանցիներ, բանվորներ, մտավորականներ, ուսանողներ, ես, ձեր Հայրապետը, ամբողջապես բաժանում եմ ձեր հույզերը, ձեր վրդովմունքները, ձեր պահանջները: Այդ ճանապարհի վրա իմ աղոթքներով և ջանքերով ձեզ հետ եմ, ձեր կողքին եմ գտնվում: Միայն թե հարկ է ուշադիր լինել և իմաստուն, եթե կուզեք՝ դիվանագետ, որոնելու և գտնելու համար լավագույն ճանապարհները, հասնելու այդ պահանջների դրական կենսագործմանը:

Այս նպատակով իմ վերջին քայլը հանդիսացավ՝ օգոստոսի 1-ին, իմ բարեկամական զրույցը Կրեմլում՝ Սովետական Միության նախագահի տեղակալ հարգարժան Պյոտր Դեմիչևի հետ: Այդ առթիվ երկու դիմումնագրեր ներկայացրի՝ ուղղյալ մեր երկրի առաջին ղեկավար մեծահարգ Միխայիլ Գորբաչովին, մեկը Ղարաբաղյան հարցի առնչությամբ, երկրորդը՝ Ղարաբաղում հայկական մի քանի վանքեր ու եկեղեցիներ վերաբացելու մասին:

Այսօր մեր առաջ դրված հիմնական հարցը այս է՝ այնպես ղեկավարվել, այնպես գործել, որ մեր համազգային միասնությունը պահպանվի, այնպես՝ որ մեր սկսած արդար դատը չձախողվի, այլ հաջողությամբ պսակվի: Դրա համար անհրաժեշտ է շատ զգույշ լինել և շրջահայաց, պահել մեր հավասարակշռությունը, մեր ողջմտությունը, մեր հեռատեսությունը և մանավանդ մեր հավատքը մեր արդար դատի հաղթանակի նկատմամբ: Այս է նաև սփյուռքի մեր եղբայրների և բոլոր հասարակական հոսանքների պատգամը: Իմ այս հավաստումը ստույգ է:

Այս սուրբ աղոթքի պահին, Միածնաէջ այս բագմադարյան տաճարի

կամարների ներքո, իմ կյանքի ութսուն տարիների շեմին, հորդորում եմ ձեզ բոլորիդ՝ հոգով-սրտով և պայծառ մտքով հավատարիմ մնալ մեր ազգային իդեալներին և Ղարարաղի հայության սրբազան սպասումներին, հավատարիմ մնալ մեր համազգային միասնության ուխտին, հավատարիմ մնալ մեր հայրենի պետությանը: Բոլորիդ կարդում եմ հայրական հրավեր՝ լավատես ոգով, ինքնավստահ ու խաղաղ վաղը սառավոտյան լուսաբացից հետո ներկայանալ ձեր աշխատանքի վայրը և դիմավորել ձեր գործակիցներին, գոչելով՝ «Բարի լույս»: Թող վաղվա լույսը բարի լինի ու պայծառ:

Արարատի փեշերին, մեր լեռներին հենված, մենք պիտի ապրենք, մենք պետք է ապրենք ու գոյատևենք: Ապրել, նշանակում է հավատալ կյանքին, մնալ լավատես:

Այո, մենք պիտի ապրենք: Մեր ազգը տակավին նոր խոսք պիտ ասի աշխարհին համայն:

Մեր ժողովրդի ծոցից պիտի ծնվեն վաղը նոր Թումանյաններ, Եղիշե Չարենցներ, նոր Խաչատրյաններ, Մարտիրոս Սարյաններ, նոր մարշալ Բաղրամյաններ:

Սիրտ առեք հայեր, հոգով խնդացեք: Ձեր հայացքը հառած մեր Արարատին, մեր ապագային, հառաջ ընթացեք խաղաղ, անվրդով, լավատես ոգով, մեր վերածնված Մայր Հայաստանի լույս ճամբաներով:

Մեր հայրապետական օրհնությունը ձեզ բոլորիդ, բոլորին անխտիր:

«Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»: Ամեն:

Հավարտ քարոզի Վեհափառ Հայրապետը դիմեց հավատացյալներին.

Սիրելի հավատացյալներ, թեև իմ 80-ամյակի առթիվ առանձին հանդիսություններ չեն լինելու, սակայն այս աղոթքի պահը պետք է տեղի ունենար: Եվ գոհ եմ, որ դուք էլ այդքան մեծ թվով ներկա եք գտնվում այս Ս. Տաճարի կամարների ներքո: Այս պահին ես հոգեկան մեծ գոհունակությամբ ուզում եմ ձեզ ծանուցել, որ ինձ շնորհավորելու համար այստեղ է գտնվում Ռուսաց Պրավոսլավ Եկեղեցու Սրբազան Պատրիարք Պիմենի ներկայացուցիչը, նրա աջ բազուկը՝ գերաշնորհ միտրոպոլիտ Ֆիլարետը իր շքախումբով, որ բերում է ողջույնը և սերը և բարի մաղթանքները Ռուս Պրավոսլավ Եկեղեցու և ռուս հավատացյալ ժողովրդի: Ես դրա համար խորապես զգացված եմ, շնորհակալություն եմ հայտնում և նրան, և Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին, և մաղթում եմ, որ մեր դարավոր բարեկամությունը, եղբայրությունը Ռուս Պրավոսլավ Եկեղեցու և Հայաստանյայց Եկեղեցու և ժողովուրդների միջև միշտ մնա անսասան, և հոգեկան նորանոր իրագործումներով փառավորվի: Այս առիթով ներկա են գտնվում մեր մեջ նաև արտասահմանից ժամանած մեր հոգևոր եղբայրները, սրբազան արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ՝ ԱՄՆ-ից, Հարավային Ամերիկայից, Արևմտյան Եվրոպայից, Ռումինիայից, Բուլգարիայից, Սուրիայից, Հունաստանից և Եգիպտոսից և այլ շրջաններից, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի ներկայացուցիչներ ու նաև բազմաթիվ ներկայացուցիչներ Սփյուռքի հայության՝ ազգային գործիչներ, տարբեր թերթերի խմբագիրներ և հոծ թվով ուխտավորներ:

Թող Աստված միշտ մնա օգնական և պահապան մեր Սուրբ Եկեղեցուն, և մեր ժողովրդին հեռու պահի ամեն տեսակի փորձություններից, որպեսզի մենք կարողանանք Մայր Հայրենիքի հողի վրա շարունակել մեր

խաղաղ, շինարար և ստեղծարար կյանքը: Այս առիթով ես սիրով ողջունում ես մեր հոգևոր եղբայրներին, որ այստեղ են գտնվում, և կրկին աղոթում եմ, որպեսզի Աստված անսասան պահի և միշտ ծաղկյալ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, մեր Եկեղեցվո պատմական նվիրապետական Աթոռները՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Երուսաղեմի Պատրիարքությունը, Կոստանդնուպոլսո Պատրիարքությունը և հանայն հավատացյալ մեր ժողովուրդը ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

Շնորհք, սեր և խաղաղություն եղիցին ընդ ձեզ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:

Ապա շնորհավորանքի սրտագին խոսք ասաց եկեղեցու Ավագ խորան հրավիրված Մինսկի ու Բելոռուսիայի միտրոպոլիտ Ֆիլարետը: Նա իր խոսքի մեջ ի մասնավորի ասաց.

ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՖԻԼԱՐԵՏԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ձերդ Սրբություն, ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց.

Այս հրաշալի, արևոտ աշնանային օրը թույլ տվեք բերել Ձերդ Սրբությանը եղբայրական անկեղծ շնորհավորանքները Մոսկվայի և համայն Ռուսիո Պատրիարք Պիմենի: Ի դեմս նրա Ձեզ այսօր ողջունում, շնորհավորում և բարեմաղթություններ է հղում ողջ Ռուս Պրավոսլավ Եկեղեցին:

Մենք առաքելական Եկեղեցիներ ենք, մենք միասնական առաքելական Եկեղեցի ենք. պատկանում ենք տարբեր Ավանդությունների, բայց մեր միությունը Տիրոջով ամրացել է դարերի փորձությամբ: Ռուս և հայ ժողովուրդները, հավատարիմ մեր Տիրոջը և Հիսուս Քրիստոսին, միշտ իրենց կյանքով հաստատել են Նրա Ավետարանի գաղափարները, սիրո և եղբայրության գաղափարները: Եվ այս սուրբ օրը ուզում ենք մի անգամ ևս վկայել Ձերդ Սրբությանը Ռուս Եկեղեցու և ռուս ժողովրդի սերն ու հավատարմությունը: Մեր ժողովուրդները ցուցաբերում են փոխադարձ սեր և հավատարմություն, մեր Եկեղեցիները ցուցաբերում են փոխադարձ էկումենիկ կապվածություն և վկայում են ամբողջ աշխարհին, թե ինչպե՛ս պետք է ծառայել Եկեղեցու միասնությանը և մարդկային ցեղի միասնությանը:

Ձերդ Սրբությունը Իր ամբողջ կյանքով օրինակ է այդպիսի ծառայության: Մեր Եկեղեցում Ձեր սուրբ անունը մեծարված է և սիրելի: Եվ այսօր հավանաբար Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը կլիներ Ձեզ հետ, եթե բուժման կարիք չունենար: Նա խնդրեց հաղորդել Իր եղբայրական ողջույնն ու շնորհավորանքը Ձերդ Սրբությանը՝ ինչպես նաև Ձեր բոլոր եղբայրակիցներին, որոնք հավաքվել են արտասահմանի հայկական թեմերից:

Ռուս Եկեղեցին միշտ Հայ Եկեղեցու ու հայ ժողովրդի հետ է եղել թե՛ ուրախության, թե՛ տխրության օրերին. մենք պատմականորեն միշտ միասին ենք եղել, և այս օրերին Ձեզ հետ միասին Աստծուն աղոթում են մեր Եկեղեցիները, մեր ժողովուրդները և մեր երկրի ողջ ժողովուրդները: Մեր Եկեղեցին շատ է մեծարում Աստվածամորը. Նա Եկեղեցու մայրն է, Նա մեր բոլորիս մայրն է: Աստվածամոր Վլադիմիրյան այս նկարը, ստեղծված 18-րդ դարում, ընդունեցեք իբրև մեր սիրո արտահայտությունը, մաղ-

թանքով, որ Աստվածամայրը պահպանի ո՛ւր Եկեղեցիներն ու ժողովուրդները, և մենք բոլորս, իբրև Նրա խելացի զավակները, ավելի շատ բարիք գործենք:

Շնորհակալություն Տիրոջը՝ բազում տարիների մաղթանքներով:

Միտրոպոլիտի շնորհավորական խոսքից հետո տեղի ունեցավ Հայրապետական մաղթանք:

Ս. պատարագից հետո Վեհարանի ճաշասրահում տրվեց ճաշկերույթ, ուր Վեհափառ Հայրապետին, նրա 80-ամյա հոբելյանի առթիվ, շնորհավորեցին Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի, Գերագույն Հոգևոր Խորհրդի ու սփյուռքահայության ներկայացուցիչները:

Հանուն Ռուս Եկեղեցու, Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի ուղերձը ընթերցեց միտրոպոլիտ Ֆիլարետը.

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՏԵՐ ՏԵՐ ՎԱՋԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Զերդ Սրբություն,

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Զեր 80-ամյակի այս ուրախալի օրը և Զեր կյանքի նշանակալից իրադարձության առիթով Ռուս Պրավոսլավ Եկեղեցու անունից ի սրտե շնորհավորում և ողջունում եմ Զեզ սուրբ առաքյալ և ավետարանիչ Հովհաննես Աստվածաբանի խոսքերով. «Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հօր ճշմարտութեամբ եւ սիրով եղիցին ընդ ձեզ» (Բ Հով. Ա 3):

Մենք ջերմորեն աղոթում ենք Զեզ համար և ջերմեռանդորեն գոհություն ենք հայտնում Երրորդությամբ փառաբանվող Աստծուն առատորեն Զեզ պարգևած և Զեր կողմից բազմապատկված տաղանդների համար: Եվ մենք լսում ենք Զեզ ուղղված Տիրոջ ձայնը. «Մուտ յուրախութիւն Տեառն քո» (Մաթ. ԻԵ 14—30):

Զերդ Սրբություն, հնարավորություն չունենալով այժմ Զեզ հետ գտնվելու, խնդրեցի Սրբազան Սինոդի մշտական անդամ Եկեղեցու արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ, Մինսկի և Բելոռուսիայի գերաշնորհ միտրոպոլիտ Ֆիլարետին ժամանել Սուրբ Էջմիածին և վկայել Զեր ուսջև իմ և մեր Եկեղեցու հավատարիմ զավակների սերն ու հարգանքը Զերդ Սրբության նկատմամբ:

Աստուծո ողորմությամբ երեք տասնամյակից ավելի շարունակվում է Զեր օրհնյալ ծառայությունը Սուրբ Էջմիածնի Հայրապետական Աթոռին: Այս տարիները նշանավորված են ներեկեղեցական, էկումենիկ, խաղաղաստեղծ և հայրենասիրական Զերդ Սրբության բեղմնավոր գործունեությամբ: Ինձ խորին գոհունակություն է պատճառում վկայել, թե որքան բարձր ենք գնահատում Զեր ձգտումը իսկական եղբայրական հարաբերություններ զարգացնել մեր երկու Եկեղեցիների միջև, մշտական արտահայտումը ստացող իրենց բազմաօգտակար կապերով և բեղմնավոր համագործակցությամբ: Դա իր հատուկ կարևոր նշանակությունն ունի մեր օրերին, որն

ամբողջ քրիստոնյա աշխարհի առջև հրատապ խնդիրներ է առաջ քաշում՝ օգտագործել բոլոր հնարավորությունները՝ մարդկության, Աստուծո ողջ ստեղծագործության պահպանման համար: Մեր պարբերական հանդիպումները օգնում են մեզ միասին աղոթել հանուն քրիստոնեական միասնականության, հանուն աշխարհում քրիստոնեական սիրո և եղբայրության ամրապնդման, հանուն ժողովուրդների միջև խաղաղության հաստատման, հանուն մեր սիրելի Հայրենիքի բարեկեցության:

Մենք հավատում ենք, որ այս աղոթքները, մեր միջև եղած փոխհասկացողությունը և համագործակցությունը հաճելի են Տիրոջը և կրում են իրենց վրա Նրա ամենազոր օրհնությունը:

Ես հատկապես շեշտում եմ մեր ավանդական համագործակցության կարևորությունը՝ ուղղված մեր թանկագին Հայրենիքի բարիքի բազմապատկմանը, հանուն մեր մեծ Տերության եղբայրական ժողովուրդների փոխհասկացողության և բարեկամության մեջ խաղաղ և բարեբախտ գոյության ամրապնդմանը:

Ամենայն ջերմությամբ հիշում եմ մեզ համար Ձեր թանկագին մասնակցությունը Ռուսաստանի Մկրտության 1000-ամյակի տոնակատարությանը՝ արտահայտված Ձեր համաուրախությամբ, սրտահույզ ողջույնի խոսքերով մեր Սուրբ Եկեղեցուն, հիշարժան նվերներով և աղոթքի հաղորդակցությամբ:

Այս հիշարժան օրվա առիթով կրկին ու կրկին ամբողջ սրտով մաղթում եմ Ձերդ Սրբությանը Աստուծո շնորհալի օգնականությունը Ձեր հայրապետական ծառայության բոլոր ուղիներում, հոգևոր և մարմնավոր ուժերի ամրության և երկար տարիների կյանք:

Խնդրում եմ Ձերդ Սրբությանը ընդունել իմ կողմից հիշարժան նվեր՝ սուրբ պատկեր:

Եղբայրական խորին սիրով ի Քրիստոս՝

ՊԻՄԵՆ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ

Մոսկվա,
23 սեպտեմբերի 1988 թ.

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս սրտանց շնորհավորում է ազգընտիր Վեհափառ Հայրապետին՝ նրա ծննդյան 80-ամյակի կապակցությամբ՝ մաղթելով երկար տարիների քաջառողջ կյանք, որպեսզի վերանորոգ եռանդով շարունակի հովվել և առաջնորդել հայ ժողովրդին ու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին աստվածահաճո ճանապարհով: